

CONSEIL TERMINOLOGIQUE DE L'ARMÉNIEN OCCIDENTAL
MODERNE, GUIDE 3. MARCEIL, 1998, 85 P.

ՈՒՂԵՑՈՒՅՑ Գ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՔԱՐԻ ԵԶՐԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՄԱՐՍԵԼ, 1998, 85 էջ:

Հայաստանի անկախացումից հետո տեղի ունեցած հասարակական-քաղաքական, տնտեսական, ընկերային փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան Հայաստանի և սփյուռքի փոխհարաբերությունների վրա: Աշխուժացան հարաբերությունները ոչ միայն տնտեսության, առևտրի և այլ բնագավառներում, այլև աշխարհաբարի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման ուղղությամբ: Չափազանց կարևոր համարելով երկու ճյուղերի հետագա զարգացման ընթացքը կանոնավորելու, բառապաշարային փոխազդեցությունները մշակելու գործընթացները՝ լեզվաբանները փորձում են միջճյուղային լեզվական համագործակցության հիմքը դնել: Որպես այս նախաձեռնության առաջին քայլ վերջերս լույս տեսավ «Ուղեցույցի» Գ հատորը [Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի կողմից Մարսելում հրատարակվել են նաև «Ուղեցույցի» Ա (1993 թ.) և Բ (1995 թ.) հատորները]:

Այն սկսվում է առաջաբանով, որի հեղինակն է էքս ան Պրովանսի համալսարանի պրոֆ. Լորեն Ծեր-Մերգերյանը: Հատորն ամբողջությամբ նվիրված է նորաբանություններին:

Հեղինակը հիմք է ընդունում լեզվաբանության մեջ տարածված այն կարծիքը, ըստ որի՝ լեզվի մեջ երևան եկած և դեռևս ընդհանրական չդարձած բառային միավորները, ինչպես նաև նոր իմաստ ստացած բառերը կամ բառակապակցությունները նորաբանություններ են: Այս հատորը, ի տարբերություն նախորդ երկուսի, որոնք զետեղում էին տարբեր գիտաճյուղերին վերաբերող բառացանկեր, ընդգրկում է ընդհանուր նորաբանություններ, որոնք ներկայացված են երկու հիմնական մասերով՝ իսկական նորաբանություններով և ընդհանուր նորաբանություններով (ընդ որում՝ դրանք տրված են ֆրանսերեն-հայերեն և անգլերեն-հայերեն հաջորդականությամբ):

Իսկական նորաբանությունների բառացանկը (շուրջ 320 եզրույթ) պարունակում է վերջին մի քանի տարիներին առաջացած նոր հասկացություններ անվանող եզրույթները (տերմինները), որոնք դեռևս արձանագրված չեն բառաբաններում:

Այս բաժինների ցանկերը կազմել են Լևոն Թորոսյանը (Վիեննա) և էքս ան Պրովանսի համալսարանի պրոֆ. Լորեն Ծեր-Մերգերյանը (Մարսել):

Ներկայացված նորաբանությունների բառացանկերը մեծ մասամբ կազմված են արևմտահայ մամուլի և բանավոր խոսքի մեջ գործածություն ունեցող, ինչպես նաև այնպիսի նորակերտ եզրույթներից, որոնք առաջարկվում են Նզրաբանական խորհրդի կողմից, ինչպես, օրինակ՝ նախազեկույց (briefing), մանրալիք (micro-orde) և այլն:

Արևմտահայ աշխարհաբարը, զրկված լինելով բնականոն զարգացման ընթացքից, կարիք ունի բառապաշարի համալրման ու կանոնարկման: Եվ այս շնորհակալ գործին են ձեռնամուխ եղել «Ուղեցույցի» հեղինակները: Նրանք բառացանկերում զետեղել են նաև եզրույթների արևելահայ տարբերակները, որոնք նշված են աստղանիշով: Դա կօգնի մասնագետներին՝ հետագայում կարգավորելու գրական երկու տարբերակներում կիրառվող հոմանիշ ձևերը, մյուս

կողմից՝ ծանոթանալու դրական արևելահայերենում գործածվող ձևերին: Հայաստանի անկախացումից հետո հատկապես նկատելի են արևելահայ և արևմուտահայ դրական լեզուների բառապաշարների փոխներթափանցման միտումները. արևելահայ ճյուղում նկատելի է արևմտահայերենում արդեն կայունացած լեզուլեզների գործածություն և հակառակը:

«Ուղեցույցի» երրորդ մասում ներկայացված է վերջին մի քանի տասնամյակում արևելահայերենում գործածվող նորաբանությունների համառոտ ցանկը, որ կազմել են ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ռ. Շալունցը և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ֆ. Խլիպյանը:

Հեղինակները հավաքել են մամուլում, ռադիոհեռուստատեսային ծրագրերում լայնորեն գործածվող մոտ 600 եզրույթ, որոնք վերաբերում են ամենատարբեր բնագավառների: Հեղինակները բառացանկը համալրել են նաև արևմտահայերենից փոխառյալ բառերով, որոնց գործածությունն արդեն սովորական է դարձել արևելահայերենում: Ընթերցողի գործը հեշտացնելու նպատակով նրանք արևմտահայերենից անցած բառերը տվել են մեկ, իմաստային նորաբանությունները՝ երկու աստղանիշով, իսկ օտար բառերը՝ տարբերակիչ նշանով:

«Ուղեցույցի» հեղինակները օգտակար և շնորհակալ գործ են կատարել՝ հավաքելով վերջին տարիներին գործածվող նորաբանությունները՝ այդ կերպ օգնելով տարբեր բնագավառների մասնագետներին:

«Ուղեցույցը» գերծ չէ նաև մասնակի թերություններից. 1) ցանկալի կլինեին, որ արևմտահայ եզրացանկում շնորհավեին ածականական ձևերը, որոնք ոչ թե ինքնուրույն տերմիններ, այլ կապակցական տերմինների բաղադրիչներ են, ինչպես, օրինակ՝ աշխարհատեսության (էջ 68), բանկաշինական (էջ 69), գանձապետական (էջ 71) և այլն: 2) Արևելահայ բառացանկում նկատելի են որոշ վրիպակներ, ինչպես, օրինակ՝ ռադիոհաղորդ (էջ 84), ցատկահաղորդ (էջ 84)՝ հարթ-ի փոխարեն, աստղային դենտ՝ տենդի փոխարեն և այլն:

Այդուհանդերձ, անուրանալի է «Ուղեցույցի» արժեքը. այն իր նպաստն է բերում արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների եզրաբանական բառապաշարների մերձեցմանն ու կանոնարկմանը:

Մնում է հուսալ, որ այս աշխատանքը կդառնա այն անկյունաքարը, որի վրա կբարձրանա արևելահայերենն ու արևմտահայերենը միմյանց կապող կամուրջը, և մեր լեզվաբանների միջև սկիզբ կգվի ավելի սերտ համագործակցություն՝ հօգուտ միասնական տերմինաբանության կարգավորման:

Ս. Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների
թեկնածու